

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մայիսի 8—9 օրերին, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, Ս. Էջմիածնի Վեհարանում տեղի ունեցավ Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների թեմական առաջնորդների խորհրդակցական ժողով: Ժողովը, որին ներկա էին Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը և Մայր Աթոռի ու Կիլիկյան Աթոռի թեմական առաջնորդները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փոխնախագահ և վարչապետ պրն. Գագիկ Հարությունյանը, կազմակերպվել էր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ստեղծման և իրականացման առնչությամբ:

Մայիսի 8-ին ժողովականների առաջ հանգամանալից զեկուցումով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետը՝ կատարելով Հայաստանի ներկա քաղաքական, ընկերային և տնտեսական իրավիճակի համակողմանի վերլուծությունը, անդրադառնալով նաև Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմանը նպատակամղված Հայաստանի կառավարության գործադրած ջանքերին: Իր զեկուցման մեջ պրն. Հարությունյանը մասնավորապես կանգ առավ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ստեղծման նպատակի և առանցքային մի շարք այլ հարցերի շուրջ՝ նշելով, որ Հիմնադրամի ստեղծման ծրագրի հաջող իրականացումը հնարավորություն կտա մեր նորաստեղծ Հանրապետության հիմքերն ամրապնդելու և Հայաստանը դարձնելու տնտեսապես, քաղաքականապես և մշակութապես հզոր ու բարգավաճ մի երկիր: Իր զեկուցման վերջում Հայաստանի վարչապետը կառավարության անունից շնորհակալություն հայտնեց Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ անձամբ հովանավորում ու քաջալերում է սույն նախաձեռնությունը՝ Հայ Եկեղեցու գործուն մասնակցությունը բերելով համազգային կարևոր նշանակություն ունեցող այս գործին:

Ապա ողջույնի ջերմ խոսքերով հանդես եկան Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի ներկայացուցիչ Տ. Արտակ արքեպիսկոպոսը:

Ժողովն այնուհետև քննության առավ «Հայաստան» Համահայկական

Հիմնադրամի կանոնադրության նախագիծը, որի շուրջ ներկաների կողմից արվեցին զանազան առաջարկություններ ու թելադրանքներ:

Նույն օրը, խորհրդակցության երկրորդ նիստի ընթացքում, քննարկվեց արտաքին Սփյուռքում «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կազմակերպման գործընթացի վերաբերյալ Մայր Աթոռի կողմից ներկայացված առաջադրանքների մի նախագիծ՝ բաղկացած 17 հոդվածներից: Նախագիծը ամենայն մանրամասնությամբ, հոդված առ հոդված քննության առնվելուց հետո, լրամշակվեց՝ հաշվի առնելով խորհրդակցության մասնակիցների որոշ դիտողություններն ու առաջարկությունները:

Հետևյալ օրը, մայիսի 9-ին, նախագծի լրամշակված տեքստը ընթերցվեց և հաստատվեց խորհրդակցության մասնակիցների կողմից: Այն ներկայացվելու է Հայաստանի կառավարությանը և հետագայում նաև Հոգաբարձուների Խորհրդին:

Ժողովում, այնուհետև, ընթերցվեց Մայր Աթոռի Դիվանի կողմից կազմված Հաղորդագրությունը սույն խորհրդակցության մասին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը խորհրդակցության մասնակիցների առաջ հանդես եկավ ընդարձակ զեկուցումով՝ վերջին շրջանում Հայաստանում ծայր առած և հետզհետե ծավալվող աղանդավորական շարժման և Հայ Եկեղեցու ու ժողովրդի համար նրա ներկայացրած լուրջ վտանգի մասին:

Նորին Սրբության զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի լայն փոխանակություն. ժողովականները զանազան առաջադրանքներ ներկայացրին այդ հարցի վերաբերյալ:

Խորհրդակցական երկօրյա սույն ժողովը փակվեց Հայոց Հայրապետի օրհնությամբ և խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ՇՐՋԱՊՏԱՏՎԱԾ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՄԵԾԻ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋՈՑՈՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԵՎ ԽՍՐԳԵՂԵՑԻՆԵՐՈՎ

Ս. ԷՋՄԻԱԾՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ